



Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճեննել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material


1924 ա

Ն. Կ. ԿՐՈՒԹՈՎԱՅԻ

ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ
ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ
ՀԵՐԹԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Թարգմ. Զ. ԱԼԼԱՅՈՒՄՅԱՆ

ՊԵՇԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ - ՅԵՐԵՎԱՆ
1929



Ն. Կ. ԿՐՈՒԹԱԿԱՅԱ

ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ

ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ

ՀԵՐԹԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Թարգմ. Զ. ՍԱԼԻՑՈՒՄՑԱՆ

A 8731



Պետական հրատարակություն, Յերևան, 1929

15-759

Հր. № 1076: Գրառեպվար № 2748 (բ): Տիրաժ 2000:

*Պետհրատի տուաջին տպարան Վաղարշապատում:
Պատվեր № 154:*

ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒ-
ԹՅԱՆ ՀԵՐԹԱԿԱՆ ԽՆԴԻԲՆԵՐԸ

Դաստիարակության ելության մասին կարելի լեռ տարբեր բացատրություններ տալու նեղ մտքով վերցրած՝ դաստիարակություն ասելով՝ սովորաբար մենք հասկանում ենք հասակավորների նախամտածած ու սիստեմատիկ ներգործությունը մանուկների ու պատանիների վարքի վրա։ Դաստիարակներ են համարվում սովորաբար ծնողներն ու նրանց փոխարինող անձինք։ Հարուստ մարդիկ իրենց փոխարեն վարձում ելին դաշտակներ, բոննաներ ու գուշերնյորներ։ Դաստիարակներ են համարվում նաև ուսուցիչները։ Սակայն ուսուցիչների մի մասը առա-

վելապես պարապում և ուսուցմամբ.
իսկ աշակերտների դաստիարակության
ու նրանց վարք ու բարքի վրա հսկե-
լու համար առաջներում ստեղծում ե-
լին «վերակացուների», «դասարանա-
կան դաստիարակների», «դասարանա-
կան դաստիարակչուների» պաշտոն-
ներ և այլն:

Սակայն դաստիարակում են վոչ մի-
այն առանձին անհատները, այլև ըն-
տանեկան կամ դպրոցական պայման-
ները:

Դաստիարակում են նաև փողոցը,
հասարակական հիմնարկությունները,
շրջապատը, հասարակակարգը: Դաս-
տիարակում են դեպքերը: Դաստիա-
րակում են վոչ միայն մանուկներին,
այլև հասակավորներին:

Այդ պատճառով «դաստիարակու-
թյուն» խոսքը հաճախ գործադրվում է
նաև ուրիշ, ավելի լայն իմաստով: Ա-

առւմ են — «կլանքը նրան դաստիարակելու դարձրել եւ հաստատակամ մարդ», կամ «նա դաստիարակվել եւ չափազանց ծանր պայմաններում», ասում են — «փողոցի մանուկներ», «ստորերկրյա մանուկներ», «լուր դարի վորդին», «հեղափոխության դուստրը» և այլն:

Մարքսի թեղերը ֆեւերբախի մասին, Ենգելսի ծանոթություններով հանդերձ, ցույց են տալիս, վոր Մարքսի ու Ենգելսի կարծիքով՝ «մարդիկ հանդիսանում են հանգամանքների ու դաստիարակության արդյունք և վոր հանգամանքների ու դաստիարակության փոփոխումով փոխվում են նաև մարդիկ»։ Մական այգալիսի վորոշումը, վոր տալիս եր նաև առաջվա մատերիալիստական ուսմունքը, նրանց չեր կարող բավարարել Ռւստի նրանք դրա վրա ավելացնում ելին, վոր չպետք ե մոռանալ, վոր «հանգամանքները փոխում

են հենց իրենք մարդիկ և վոր դաստիարակն ինքը պետք եւ դաստիարակված լինի» և վոր «հանգամանքների ու մարդկային գործունելության փոփոխությունների զուգադիպմանը կարելի յե հասնել ու այն խելացիորեն հասկանալ միայն վորպես հեղափոխական (իրականությունը վերափոխող) պրակտիկա»:

Մարքսի ու Ենգելսի այդ թեզը Ֆեյբրախի մասին ցուց եւ տալիս առաջվա մատերիալիզմի ու իրենց իսկ ստեղծած դիալեկտիկական մատերիալիզմի տարբերությունը։ Դիալեկտիկական մատերիալիզմը իրականությունը վերցնում եւ նրա զարգացման ու ձեփափոխվող փոխազդեցությունների պրոցեսում։

Այդ թեզը (Յ-ըդ) Ֆեյբրախի մասին մեզ ոգնում եւ ավելի լավ հասկանալու նաև այն փոխազդեցության հար-

ցը, վոր գոյութիւնն ունի լայն մաքով
վերցրած դաստիարակութիւնն (ինչպես
ընդունված ե մեզ մոտ ասել «միջա-
վալրի դաստիարակութիւն» մասին) ու
նեղ մաքով վերցրած դաստիարակու-
թիւնն (հասակավորների պլանաշափ ու
սիստեմատիկ ազդեցութիւնը մանկան
ու պատանու վրա) միջեւ:

ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԱՆՑՑԱԿՈՒՄ

Դարերի ընթացքում բուն դաստիա-
րակութիւնն (նեղ մաքով վերցրած) դե-
րի տեսակարար կշիռը շարունակ փո-
փոխութիւնների յեւ յենթարկվել, — մի
հանգամանք, վոր մինչև հիմա յել շա-
րունակվում եւ:

Վերցնենք տոհմային կենցաղը: Հա-
սարակական կազմը այն ժամանակ յե-
ղել ե պարզ ու պրիմիտիվ: Հասարա-
կական կազմի, ընտանիքի ու հասա-
կավորների ազդեցութիւնը մանուկնե-

ըի ու յերիտասարդության վրա յեղել
ե միաձև, ամբողջական ու վոչ-շերտա-
վորված։ Դաստիարակում եր, իսկապես
ասած, միայն հասարակական կազմը։
Մարդկային անձնավորությունը յեղել
ե պարզ ու ամբողջական։ Անհամեմատ
ավելի մեծ ազդեցություն ե ունեցել
շրջապատող Փիզիկական միջավայրը,
բնությունը, տոհմի կողմից մղվող պար-
քարի ձեւը իր գոլությունը պահպանելու
համար։

Տոհմական կենցաղի շրջանում կրօնն
արտացոլում ե վոչ արնքան հասա-
րակական հարաբերությունները, վոր-
քան անձնավորում ու աստվածացնում
ե բնության տարերքային յերեսութ-
ները։

«Դաստիարակությունը» նեղ իմաս-
տով, այսինքն մանուկների ու յերի-
տասարդության սիստեմատիկ ու պլա-
նաշափ դաստիարակությունը հասա-

կավշրների կողմից, հանդում եր ֆիզիկական դաստիարակության, շրջապատող ֆիզիկական միջավայրում կողմնորոշվելու և այդ նույն միջավայրի վրա ներգործելու միջոցների ու ձևերի ուսուցման:

Ինչպես կատուն իր ձագերին սովորեցնում ե մուկ քոնել, այնպես ել հասակավոր մարդը իր յերեխաներին սովորեցնում եր կերակուր ձեռք բերելու ձևերը – այն տարբերությամբ միան, վոր մարդը դարերի ընթացքում, ընության դեմ մաքառելու համար, սովորում ե ավելի ու ավելի լավ զինվելու:

Ստրկատիրության ծագումով սկիզբ ե առնում տերերի ու ստրուկների, այսինքն հասարակության յերկու հիմնական դասակարգերի, շերտավորումը: Ստրուկները լինում ելին հնագանդ ու անհնագանդ: Տերերն իրենց անհնա-

զանդ ստրուկների վրա ներգործում,
դաստիարակում ելին հնագանդվելու
համար։ Ծեծում ելին, ձաղկում մտրա-
կով, տանջում։ Սկզբներում ծեծում
ելին միայն ստրուկներին։ Սակայն
դասակարգային հասարակության մեջ
դասակարգերն ապրում ելին վորոշ
չափով փոխադարձաբար ազդելով միմ-
յանց վրա,—վարակում ելին միմյանց։
«Русские и негры» վերտառությամբ իր
մի հողվածում¹ Լենինը ցույց է տա-
լիս, թե ինչպես Հ. Ա. Մ. Ն.-ըի այն
շտատներում, վորտեղ գոյություն ու-
ներ ստրկատիրությունը նեղրերի կու-
տուրական ցածը մակարգակն իր ան-
գրագիտությամբ վարակում եր բոլոր
դասակարգերին, վորի հետևանքով այն
շտատները, վորտեղ գոյություն ուներ
ստրկատիրություն, անհամեմատ ավե-
լի շատ անգրագետ ելին տալիս։ Քան

¹ Т. XX, ч. 1, стр. 389.

այն շտատները, վորտեղ ստրկատի-
րություն չի լեղել։ Սարուկ դասակար-
գի կուլտուրական մակարդակն ազդում
ե նաև տիրող դասակարգի կուլտու-
րական մակարդակի վրա։ Այդ հանգա-
մանքն ե նշում Լենինը։ Յեկ մենք
տեսնում ենք իսկապես, վոր դասա-
կարգավին հասարակության պատմու-
թյան ամբողջ տարածության վրա
նկատվում ե այդպիսի «վարակում»։
Այնպես ել այն դաստիարակչական մե-
թոդները, վոր գործադրվում ելին
ստրուկ դասակարգի դաստիարակու-
թյան համար, վարակում ելին նաև
տիրող դասակարգի աճող սերնդի դաս-
տիարակության գործը։ Տոհմական հա-
սարակակազմի անբաժան, չշերտավոր-
ված ազդեցությունն սկսեց թուլանալ.
աիրապետող դասակարգին պատկանող
«հայրերը» փորձում են այդ ազդեցու-
թյունը ձեռքից բաց չթողնել, նախ-

նիքների փորձը հաղորդել յերիտաս-
սարդությանը. հայրերն սկսում են
«հրահանգել», «խրատել» իրենց վոր-
դիներին։ Սակայն դասակարգալին հա-
սարակության կանքը չի պարփակվում
տոհմային հասարակակարգի շրջանակ-
ներում, խրատներն այնքան ել չեն
ազդում, ու հայրերն սկսում են «ջար-
դել» իրենց վորդիների կողերը։ Վոր-
չափ կոպիտ են յեղել ստրկատիրու-
թյան ձևերը, նույնչափ ել կոպիտ են
յեղել ներգործության մեթոդները,
դաստիրակության ձևերը նաև տիրա-
պետող դասակարգի մեջ. ավելի և
կոպիտ են յեղել այդ ձևերը միջին դա-
սակարգերում։

Ծեծն ու ձաղկումը (պօրկա) դառնում
են դաստիրակության՝ ամենքի կող-
մից ընդունված մեթոդներ։ «Մի ծեծ-
վածի փոխարեն յերկու չծեծված են
տալիս, այն ել չեն վերցնում»—այս

համոզմունքը հաստատ արմատավոր-
վում ե ստրկատիրական հասարակու-
թյան մտահնության մեջ, սրանով ե
ներշնչնվում և ընտանեկան դաստիարա-
կությունը։ «Домострой»¹ — ստրկա-
տիրական հասարակության տիպիկ ըն-
տանեկան դաստիարակությունն ե ար-
տացոլում։

Կրոնը ստրկատիրական շրջանում ար-
դեն փոխում ե իր բնույթը. նա վոչ
միայն բնության ուժերն ե աստվածաց-
նում, այլ և արտացոլում ե ստրկա-
տիրական հասարակության դասակար-
գալին բնույթը։ Աստված արդեն դառ-
նում ե ամենազօր տեր, տեր-աստված,
խակ մարդիկ – նրա ստրուկներ։ Կրո-
նական դաստիարակությունը դառնում
ե միջոց ստրկատիրական հասարակու-
թյան տիրող դասակարգի գաղափարա-
խոսությունն ամրապնդելու համար։

¹ XIX դարի սուս. գրակ. հիշատ..

«Հին կտակարանը» - այդ շրջանի տիպիկ արտահայտությունն եւ Աստծու կողմից իր ստրուկների վրա ազդելու մեթոդներն են - բարկություն ու բոլոր տեսակի պատիժներ։ Ստրկատիրական շրջանի աստվածն անողորմ եւ իր բարկության ժամանակ։ Մարդիկ վողորմելի ստրուկներ են. նրանք կարող են միայն ծունը դնել դողահար։

Ֆեոդալական հասարակությունը - մի փոքր արդեն նվազ ստրկատիրական եւ Մեղմացումը թելադրվում է՝ մի կողմից ստրուկների ապստամբություններով, մյուս կողմից - ստրուկների աշխատանքը մեծագույն չափով ոգտագործելու անհրաժեշտությամբ։ Տերերն այլևս այնքան չեն վոչնչացնում, ծեծում ու տանջում իրենց ստրուկներին, վորքան նրանց պահում են վոչնչացման, ծեծի ու տանջանքի մշտական սպառնալիքի տակ։ Ճորտերի պատիժները կրում են

ավելի «մեղմ» ու սխտեմատիկ բնույթ,
վոր տնտեսական տեսակետից ավելի
ձեռնտու լի: Մասսաները հնագանդ
պահելու անհրաժեշտությունն ստիպում
է հարկադրական միջոցներին միացնել
համոզելու միջոցները:

Ցեղալական հասարակության կրո-
նը – ստրկատիրության մեղմացրած ձե-
վերի կրօնն է: «Քրիստոնեական» կրօնը
արտաքին ֆիզիկական սիջավալիքին ար-
դեն քիչ տեղ է տալիս. դա մի կրօն
է, վոր իր բոլոր ուշադրությունը կենտ-
րոնացնում է մարդկանց փոխհարաբե-
րությունների վրա: Յեվ նա համոզում
է ստրուկին հաշտվել իր ստրկական
վիճակի հետ, հավատացնում է, վոր
դժբախտությունը կայանում է վոչ թե
հասարակական հարաբերությունների
մեջ, այլ հենց ինքն է ամեն բանի
պատճառ:

Յեկեղեցին միջին դարերում ահազին

տեսակարար կշիռ ե ձեռք բերում, միա-
նում ե պետության հետ ու իր վրա յե
վերցնում թե հասակավորների և թե
մանուկների դաստիարակի դերը։ Նա
խրատներ ե կարդում, հնագանդություն
ե պահանջում, սպառնում ե դժոխքով,
խոստանում ե յերջանկություն արքա-
յության մեջ, փակում ե խցերի մեջ,
պահեցողության ու նզովքի յե յենթար-
կում, անջատում ե յեկեղեցուց, կամ
թողություն տալիս մեղքերին. Նա իշ-
խում ե բոլորի մտքին, նա զեղարվես-
տը գնում ե ի սպաս յեկեղեցական
նպատակների, տալով այդ զեղարվես-
տին իբրև թե ժողովրդական բնույթ.
Նա իր վրա յե վերցնում զառամյալնե-
րի խնամակալությունը, ընտանեկան
հարաբերությունների կարգավորումը
— մկրտում ե, սպակում, թաղում, նա
դպրոցներ ե բանում փոքրահասակնե-
րի համար։

Բնտանեկան թե դպրոցական դաս-
տիարակությունը նույնպես կրում է
կրօնական բնույթը և ազգելու նույն
միջոցներն եւ գործադրում. պատիմնե-
րի հնուց մնացած ստրկատիրական կո-
պիտ միջոցների - ծեծի ու ձաղկելու
հետ միասին գործադրվում են նաև
սպառնալիքներ ու պարզեներ, զրկում
ելին կերակրից, ավելորդ աշխատանք
ելին տալիս, վոր անեծք եր համարվում
աստծու կողմից տրված. կալանքի ելին
լենթարկում առանձին սենյակներում,
վոնդում ելին դպրոցից կամ տանից,
կամ ներում ելին: Գոյություն ուներ
պատիմների մի ամբողջ աստիճանա-
ցուց - հանդիմաններուց սկսած մինչև
դաժան պատիմներ:

Միջնադարյան ֆեոդալական կար-
գերը ձևափոխվում ելին - համաձայն
այս կամ այն լերկրի զարգացման տեմ-
պի կամ տարբեր պատմական պալման-



ների, – փոխվում ելին դարեր շարունակ։ Յեկեղեցու ազդեցությունն ել զանազան բնույթ եր կրում, փոփոխություններ ելին կրում նաև դաստիարակչական ձևերը։

Նոր ծնունդ առնող հասարակական հարաբերությունները, կապիտալիստական բնույթ կրող հարաբերությունները թուլացնում ելին յեկեղեցու դերը, բարդացնում ելին դաստիարակչական խնդիրները ու թուլացնում ելին յեկեղեցու ազդեցությունը։

Ֆրանսիական Մեծ Հեղափոխությանը նախորդող շրջանում յեկեղեցին, կրոնը, հին կարգերը ընդհանրապես սկսեցին յենթարկվել անխնա քննադատության։

Ֆրանսիական Մեծ Հեղափոխության ամենահայտնի նախակարապետներից մեկը – Մոնտեսկյոն գրում եր. «Մենք դաստիարակվում ենք յերեք տարբեր,

հաճախ հակասական ուղղություններով։
մի ուղղությամբ մեղ դաստիարակում
են հայրերը, լերկրորդ ուղղությամբ—
ուսուցիչները, իսկ լերրորդ ուղղու-
թյամբ—կյանքը»։

Դաստիարակչական խնդիրներին և
նվիրված նաև ֆրանսիական Մեծ Հե-
ղափոխության մի ուրիշ նախորդողի—
Փան. Փակ Ռուսասովի գիրքը, վոր հսկա-
յական ազգեցություն ե ունեցել ժա-
մանակակիցների վրա։ Նրա «Եմիլ կամ
դաստիարակության մասին» գիրքը լույս
ե ընծալվել 1761 թվին։ Ռուսասոն այդ
գրքում խռում ե ընդհանրապես մար-
դու դաստիարակության մասին։ «Հա-
սարակական իրավակարգում, վորտեղ
ըոլոր տեղերը նախորդշված են, չու-
րաքանչյուր մարդ պիտի դաստիարակ-
վի իրեն հատկացրած տեղին համապա-
տասխան», գրում ե Ռուսասոն իր «Ե-
միլի» մեջ։ «Յեղիսպոսում, վորտեղ

վորդին պարտավոր եր բռնելու իր հոր
տեղը, դաստիարակությունը գոնե ա-
վելի ուղիղ նպատակ եր առաջադրում.
իսկ մեզանում, վորտեղ լոկ կոչումներն
են մնում, իսկ մարդիկ շարունակ փո-
խում են նրանց ելությունը, վոչվոք
չգիտե – չի գործում նա արդյոք ի մխաս
իր վորդու, դաստիարակելով նրան իր
կոչման համապատասխան։ Բնականից
բոլոր մարդիկ հավասար են, և նրանց
ընդհանուր կոչումը կայանում է հենց
մարդ լինելու մեջ. և ով ընդհանրապես
լավ ե դաստիարակված վորպես մարդ,
նա չի կարող իր կոչմանը վատ ծառա-
լել։ Կնախորոշեն, արդյոք, իմ աշակեր-
տին սուր գործածելու, յեկեղեցու կամ
դատավորի քղամիդի համար, դա ինձ
համար նշանակություն չունի։ Նախ քան
ծնողական կոչումը, բնությունը նա-
խապես կոչ ե անում նրան դեպի մարդ-
կային կյանքը։ Կյանք – ահա այն ար-

հեսար, վոր լես ուղում եմ սովորեցնել նրան։ Դուքս զալով իմ ձեռքի տակից, նա չի լինի – լես այդ խոստովանում եմ – վոչ դատավոր, վոչ զինվոր, վոչ ել քահանա։ Նա ամենից առաջ կլինի մարդ, ինչ վոր մարդ ընդհանրապես պետք ե լինի, նա կարող ե դառնալ հարկը պահանջած դեպքում – վոչ պակաս ուրիշներից, և թող ճակատագիրը հարկադրի նրան իր պաշտոնը փոխելու, – նա միշտ կհամապատասխանե իր նոր տեղին։

Մուսսոն մտորում ե այսպիսի մի հասարակության մասին, վորտեղ բոլոր մարդիկ հավասար են։ Նա փորձում ե գոյություն ունեցող հասարակակարգի ազդեցությունից դուքս պահելու իր սանին, հեռու պահելու լեկեղեցու և ընտանիքի ազդեցությունից։ Նա իր սանի համար ստեղծում ե արհեստական միջավայր – նրա սանը և դաս-

տիարակը չեն կապված վոչ նյութական պայմաններով, վոչ վորոշ դասակարգի պահանջներով, վոչ ընտանեկան հանգամանքներով։ Հին դաստիարակությունն ամբողջովին հիմնված եր հարկադրանքի վրա։ Իսկ Ռուսական պահանջում ե բնական դաստիարակություն։ «Բանավոր խրատներ, հրահանգներ չտաք ձեր սանին, վորովհետև ամեն բան նա ինքը պետք ե յեզրակացնի փորձից։ Վոչ մի պատժի չենթարկեք նրան, վորովհետև նա չգիտե, թե ինչ կնշանակի լինել մեղավոր։ յերբեք մի հարկադրեք, վոր նա ներողություն խնդրի, վորովհետև նա իվիճակի չի ձեզ վիրավորելու...», «մարդկացին սրտում չկա բնածին ապականություն»...«ըսկզբնական դաստիարակությունը պետք ե զուտ բացասական լինի։ Նա պետք ե կայանա վոչ թե առաջինություն կամ ճշմարտություն ավանդելու մեջ, այլ

սիրտը արատներից և միտքը մոլորվելուց պահպանելու մեջ»:

Ռուսական ուղղում ե իր Եմիլին դաստիարակել գլուզում — «անակալեզներից (լակեյներից) հեռու, վորոնք իրենց տերերից հետո մարդկանց վատադույն տեսակն են կաղմում. հեռու քաղաքացին ու բարքերից, վոր իրենց արտաքին փայլով մանուկների համար դառնում են գալթակղիչ ու վարակիչ, այն ինչ՝ գլուզացիների արատները, շպարված չլինելով, իրենց ամբողջ կոպտոթիւամբ, ընդունակ են ավելի հեռու մղելու իրենցից, քան թե գալթակղեցնելու, յեթե չկա մի շահ, վոր հարկադրե նմանվելու նրանց»:

«Եմիլը» հիմա լել հետաքրքրութիւամբ ե կարդացվում: Մանավանդ հետաքրքրական են այն եջերը, վորտեղ խոսվում ե աշխատանքալին դաստիարակութիւն մասին:

Թուսսովի այս դադարիարներն սկիզբ
յեղան հին դաստիարակութիւն, ֆեո-
դալական շրջանի դաստիարակութիւն
վրա խաչ քաշելու գործին, և հենց
դրանումն ե կալանում «Եմիլի» հիմնա-
կան նշանակութիւնը։ Սակայն Թուս-
սոն խոսում եր այնպիսի դաստիարա-
կութիւնն մասին, վոր չեր կարող լինել
իրական կյանքում, —մի դաստիարակու-
թիւն, վոր կոնկրետ միջավայրից,
կյանքի կոնկրետ պայմաններից դուրս
պիտի կատարվեր։

Շվեցարիայում XVIII դարում արդեն
մուտք եր գործել կապիտալիստական
արտադրութիւնը. նրա ազգեցութիւնն
տակ, հասարակական կյանքի հին նա-
հապետական հիմքերն սկսեցին քայլայ-
վել. զյուղացիութիւնը շերտավորվել
եր, և ամբողջ լեռկիրը վորոշակի ըն-
կել եր ճգնաժամի մեջ։ Ահա այդպիսի
պայմաններում Պետալոցցին այսուեղ

փորձում և Խուսսովի դադաֆիարներն
իրագործել դրուղական յերեխաների
դաստիարակութիւն ժամանակ կյանքը,
սակայն, աղճառեց Պետալոցցու ալդ
փորձերը:

Այն ժամանակ անտեսապես ու քաղա-
քականապես գեռ ևս հետամնաց Գեր-
մանիայում ևս փորձ արին Խուսսովի
դադաֆիարները կենսագործելու—այս
անդամ արդեն տիրող դասակարգերի
դաստիարակութիւն համար: «Ֆիլան-
տրոպիստները», Բազեգովի առաջնոր-
դութիւնը, ունեոր ծնողների յերեխա-
ների համար հիմնարկեցին մի շարք
փակ գոլրոցներ, այսպես ասած «Փի-
լանտրոպիններ»: «Իմ ծրագրերը և
մանկավարժական աշխատանքները»,
զբում եր Բազեգովը, «Նախորդոշված են
միայն հարուստ դաստիարգերի համար,
ոկսած իշխանների ու վերջացրած վա-
ճառականների ու գեղարվեստագետ-

Ների յերեխաներով։ Այդ մեծ ու կա-
րևոր խավի աշխարհիկ դաստիարակու-
թյունն անվիճելիորեն պետք է կը ի
այդ դասակարգի համար անհրաժեշտ
գործնական բնույթ»։ Այդ ֆելանտրո-
պիններում գոլություն ունելին, այս-
պես կոչված, «Փամուլանտներ» – սպա-
սավորներ չքավոր աշակերտներից։
Նրանք սպասավորում ելին արտօնյալ
դասակարգերին պատկանող աշակերտ-
ներին, նրանց կոշիկներն ելին մաք-
րում և այլն։ Յերբեմն արտօնյալ աշա-
կերտները՝ պատժվելու համար, փոխա-
դրվում ելին Փամուլանտների շարքը
և ստիպված ելին լինում սեադործ աշ-
խատանք կատարելու, վոր ստորացու-
ցիչ բան եր համարվում։ Այդպիսով
Ռուսացի գաղափանները զուգորդվում
ելին դաստիարակության հին, ճորտա-
տիրական մեթոդների հետ։

Ֆրանսիական Մեծ Հեղափոխության

շրջանում ժողովրդական կրթության
խնդիրները տաք վիճաբանությունների
առարկա ելին դառնում թե ազգային
ժողովում, թե որենսդրական ժողովում
և թե կոնվենտում։ Նրանցում ցայտուն
կերպով արտահայտվում եր տեղի՝ ու-
նեցող պայքարի դասակարդալին բը-
նութը։ Հիմա յել պետք ե ուշադրու-
թյամբ ուսումնասիրել այդ պայքարը
—դեպի ժողովրդական կրթության ու
դաստիարակության հարցերն ունենա-
լիք մոտեցման տեսակետից։ Մանա-
վանդ ուսումնասիրության արժանի յեն
յակոբինների գաղափարները։

1791 թվի ոգոստոսի 5-ին, մարդու
իրավունքների մասին հայտարարելուց
հետո, հայտարարվում է նաև — բոլոր
քաղաքացիների համար ընդհանուր
հասարակական կրթության մասին։
Միրաբոն կողմանակից եր մասսանների
հասարակական կրթությանը այն պատ-

ճառով, վոր յերկուղ եր կըում ալդ
մասսաներից և ուզում եր նրանց վրա
ազդել դպրոցի միջոցով։ Տալելըան
յեպիսկոպոսը նույնպես կողմնակից եր
ընդհանուր կրթության, վոր առաջին
աստիճանի դպրոցների համար պետք է
լինի ձրի ու պարտադիր, սակայն ա-
ռաջվա պես —կըոնական։

Յերբ դեկավարությունն անցնում է
ժիրոնդիսաների ձեռքը, կոնդորսեն
նրանց անունից որենսդրական ժողով
և մտցնում մի նախագիծ, ըստ վորի
կըոնի դասավանդությունը փոխարին-
վում ե բարոյականության դասավան-
դությամբ. բոլոր աստիճանի դպրոցնե-
րը, նրանց թվում նաև բարձրագույն
դպրոցները ձրի յեն և կապված են ի-
րար հետ։ Հուլիսի 23 ին կոնվենտ և
մտցվում յակոբին լեպելետյեֆի նա-
խագիծը այն մասին, թե ինչպես իրա-
կանացնել ընդհանուր դաստիարակու-

թյունը, ի՞նչպես հայթալիթել դրա համար պահանջվող միջոցները, ի՞նչպես չքավորներին հնարավորություն տալ սովորելու։ Լեպելետինի նախագծի հետ սերտ կապ ուներ Լավուազիյնի և Գաղանի Փատոցի նախագիծը, վորը լուսաբանում եր աշխատանքալին պոլիտեխնիկ կրթության խնդիրը և վորը պաշտպանություն գտով բանվորների՝ 1793 թվի սեպտեմբերի 15-ին տեղի ունեցած՝ հսկայական ցուցցով։

Յակոբիններին, սակայն, չ'հաջողվեց իրենց դադարափարներն իրավործելու կյանքի մեջ։ Բայց Ֆրանսիական Մեծ Հեղափոխությունն սկիզբ դրեց ընդհանուր կրթությանը, ժողովրդական դպրոցը փոխարինվեց կապիտալիստական շրջանի դասակարգալին դպրոցով։

Բոլոր լերկրների կապիտալիստները լավ են հասկանում ժողովրդական մաս-

սաների կրթության կարևորությունը։
Հետզհետե բանվորները պետք է ավելի
կրթված լինեն։ այդպես ե պահանջում
տեխնիկալի առաջադիմությունը, դրա-
նից ե կախված արդյունաբերության
դարգացումը։ Սակայն կրթված բան-
վորը վտանգավոր ե կապիտալիստի
համար։ Այդ պատճառով բոլոր լերկրը-
ների կապիտալիստներն առանձին ու-
շադրություն են դարձնում այն բանի
վրա, վոր բանվորական մասսաները
դաստիարակվեն իրենց համար ցանկա-
լի վոգով։ Կրօնի հեղինակությունը մի
քանի լերկրներում արդեն ընկել ե
բավական հիմնովին կերպով և որեցոր
ավելի ու ավելի լե ընկնում գիտության
նվաճումների շնորհվ, և նրա տեղը բըռ-
նել ե բուրժուական բարոյականու-
թյան դասավանդումը, մի բարոյակա-
նության, վոր ներշնչված ե շովինիս-
տական ու սեփականատիրական վոգով։

Սակայն մի ամբողջ շարք լերկրներում
դպրոցը գեռևս չի բաժանված լեկե-
ղեցուց, կրօնական դաստիարակու-
թյունը մինչև այժմ ել ծաղկում և
ժողովրդական դպրոցներում։ Իսկ դաս-
տիարակության մեթոդները վերցրած
են ամբողջովին ստրկատիրական ու
ֆեոդալական ժամանակաշրջաններից։

Նրանք ծաղկում են թե աշխարհիկ
դպրոցում և թե կրօնական դասավան-
դություն ունեցող դպրոցում։ Շվեցա-
րիայի, Գերմանիայի, Ֆրանսիայի ժո-
ղովրդական դպրոցներում լերեխանե-
րին ծեծում են, պատժում, վախեց-
նում կամ պարզեատրում։

Այդ դպրոցներում մանուկների մեջ
մեռցնում են ամեն մի ինքնուրույն
միտք, ամեն կերպ աշխատում են,
վոր տիրեն մանուկների զգացմունքնե-
րին, սովորեցնեն նրանց ամեն բանի
նայելու բուրժուական ակնոցներով,

գլուխ խոնարհեցնեն հարստության առաջ, ամեն մի իշխանավորի առաջ, սովորեցնում են կուրորեն հնագանդվեր, կատարել ուսուցչի ամեն մի հրամանը:

Իր յերեխաներին բուրժուազիան դաստիարակում ե ուրիշ մեթոդներով: Այնտեղ թագավորում է «Նոր դաստիարակությունը»: Իր յերեխաների համար բուրժուազիան հնարել է «Նոր գյուղական դաստիարակչական դպրոցական հիմնարկներ» (Landerziehungsheime): Ինչպես Ռուսաստանի իր ենիլին դաստիարակում եր բնության ծոցում, հեռու քաղաքի ապականող ազգեցությունից, այնպես ել ժամանակակից բուրժուազիան դաստիարակում ե «իր արդյունաբերության ապագա զեկավարներին» պուրակներում ու կալվածներում, վորքան կարելի յե, հեռու մեծ քա-

զաքների փոթորկալի դասակարգային
պայըարից:

Նման տիպի առաջին դպրոցը հիմնել
ե գ-ը Ռեդդին Անգլիայում — Արքատս-
հոլմում. ապա Անգլիայում այդպիսի
մի դպրոց ել հիմնվել ե Բեդալում։ 10
տարի հետո Դեմոլենի նախաձեռնու-
թյամբ նույնակիսի մի դպրոց ել հիմնված
ե «Les Roches»-ում։ Հիմա քիչ չեն ալդ-
պիսի դպրոցները բոլոր կապիտալիս-
տական լերկրներում։ Բուրժուազիան.
մանուկներին կազմակերպում ե նաև
դպրոցից դուրս։ Բուրժուական ար-
տադպրոցական տիպիկ ձևը հանդիսա-
նում ե բոլ-սկառատիզմը։ Դա դաս-
տիարակության մի շատ մտածված
մանկավարժական սիստեմ ե, վոր հիմ-
նավորված ե մանկական հոգեբանու-
թյան, մանկական շահագրգումների
ու մանկական միջավայրի ճանաչողու-
թյան վրա։ Բոլ-սկառատական կազ-

մակերպությունը – կամավոր կազմակերպություն եւ Նա գրավում ե լեռեխաներին, վորովհետև կազմակերպում ե նրանց աշխատանքն ու հանգստան ժամերը, խաղի տարրեր ե մտցնում: Բոյ-սկառտիզմի միջոցով բուրժուազիան դաստիարակում ե բուրժուական հասարակակարգի համար հավատարիմ ծառաներ: Զբոսանքները, խաղերը, բոյ-սկառտների վողջ գործունելությունը ուղղված ե այն բանին, վոր լեռեխաների մեջ դաստիարակվի դեպի թագավորը (կամ բուրժուական հանրապետությունը) տածած անձնվիրության զգացմունքը, կրոնական մոլեռանդության կամ շովինիզմի զգացմունքը:

Ժամանակակից բոյ-սկառտիզմը ավելի ու ավելի ագրեսիվ ընուլթ ե ստանում, վերափոխվում ե Փաշիզմի, ու հարյուրակային կազմակերպության,

վորը ներշնչվում ե ատելութիւնն զգաց-
մունքով դեպի ամեն մի հեղափոխա-
կան շարժում։

Ֆաշիզմը դպրոցի միջոցով ձգտում
ե ազգելու յերեխաների վրա։ Սակայն
դեպի հեղափոխական շարժումը մա-
նուկներին կույր ատելությունն ներշն-
չել աջողվում ե միայն այն վայրերում,
վորտեղ բանվորական շարժումը դեռ
թույլ ե, վորտեղ բանվորությունը դեռևս
չի դիմադրում ֆաշիզմին, վորտեղ բան-
վորական ընտանիքը չի մասնակցում
ֆաշիզմի դեմ մղվող պայքարին, վոր-
տեղ մանուկը հավատում ե ուսուցչի
ասածներին։ Իսկ վորտեղ բանվորները
բուռն թափով դիմադրում են ֆաշիզ-
մին, այնտեղ մանուկն արդեն անպաշտ-
պան չի մնում ֆաշիստական պրոպա-
գանդի նկատմամբ, այնտեղ նա նվազ
դյուրահավատ ե դառնում նրա վերա-
բերմամբ։

Այդ պատճառով բուրժուազիան
միայն ֆաշիզմով չի բավականանում:

Պատերազմը, Հոկտեմբերյան հեղափոխությունը Ռուսաստանում, հունգարական, գերմանական հեղափոխությունները բուրժուազիային հարկադրեցին առանձին ուշադրություն դարձնելու դպրոցին, դպրոցը դարձնելու աճող սերունդը հոգեպես ստրկացնելու մի հատու դենք:

Դաստիարակել հին ձեռվ ազիս չի կարելի: Պետք ենոր ձեռվ տանել գործը: Բուրժուազիան առանձին նշանակություն ե տալիս բարոլական դաստիարակությանը: Նա միջադպալին համաժողովներ (կոնգրեսներ) ե գումարում — բարոլական դաստիարակության հարցերը քննելու: Այդ բանն սկսվել ե դեռ մինչև պատերազմը: սակայն այդ համաժողովներին հիմա առանձին նշանակություն ե տրվում:

Այդ կարգի համաժողովներից առաջինը կայացել է Լոնդոնում – 1908 թվին, յերկրորդը՝ Հաազում – 1912 թ., յերրորդը՝ Փընկում – 1923 թվին, չորրորդը՝ Հոռոմում – 1926 թվին – իտալական թագավոր Եմմանուիլ III-ի և Բենիտո Մուսսոլինու բարձր հովանավորությամբ։ Հետեւալ համաժողովը պետք է կայանա Պարիզում – 1930 թ..

Այդ համաժողովներին հավաքվում են բոլոր յերկրների բուրժուական ականավոր մանկավարժները, վորոնք առանձին համբավ են ձեռք բերել աշխատավորների յերեխաներին բուրժուազիային հնագանդ լինելու վոգով դաստիարակելու, իսկ տիրող խավերի յերեխաներին իշխելու համար պատրաստելու գործում։ Այդտեղ դուք կպատահեք զանազան ուղղությունների մանկավարժների անուններ, սկսած կաթոլիկ յեկեղեցու պաշտպանների ներ-

կայացուցիչներից մինչև բոլոսկառատիզ-
մի և գերմանական «վճռական ռեֆոր-
միստների» ներկայացուցիչները։ Բա-
րոյական դաստիարակության այդ հա-
մագումարներին կառավարությունները
մեծ ուշադրություն են դարձնում, ու-
ղարկելով այնտեղ իրենց աչքի ընկնող
դործիչներին։ Այն մարդիկ, վորոնք
պատերազմից առաջ ամեն կերպ աշ-
խատում ելին ազգային ատելություն
գրգռել։ Իիմա միանում են, վորպեսզի
ընդհանուր ուժերով դտնեն պրոլետա-
րիատի լեռեխաների վրա բարոյական
ազդեցություն անելու լավագույն մի-
ջոցները,

Փընկի համաժողովի որակարգում,
վորը գումարվել եր լեռկրորդ համաժո-
ղովից 11 տարի հետո, ուրեմն համաշ-
խարհային պատերազմի վորձից հետո,
մի հարց կար դրված – «պատմության
նշանակությունը բարոյական և սոցիալա-

կան դաստիարակության տեսակետից»։
Յերկրորդ նիստը նվիրված եր «հոգե-
կան կյանքի միասնականության» հար-
ցին, յերբորդ և չորրորդ նիստերը՝ «դա-
ստիարականդություն և համերաշխություն»
հարցին։ Այդ համաժողովի մեխը կազ-
մում եր հայտնի մանկավարժ Ֆրիդրիխ-
Վիլհելմ Ֆերստերի զեկուցումը — պատ-
մության ֆալսիֆիկացիան (կեղծումը)
աճող սերնդի համար։ Իհարկե, այդ
բանի մասին խոսում ելին շղարշված
ձեռվ։

Վիճում ելին այն բանի մասին,
թե ինչումն են կայանում բարոյակա-
նության արմատները. ինչպես պետք
է մոտենալ այդ հարցին — մետաֆիզի-
կական, կաթոլիկական, ավետարանա-
կան, պողիտիվիստական, թե ազնոս-
տիկական¹ տեսակետից. խոսում ելին

¹ Ազնոտոցիզմը — գա մի ուղղություն
և իդեալիստական փիլիսոփայության մեջ,
վորի համաձայն մարդիկ վոչինչ չեն կարող
իմանալ յերեսութիւնության մասին. ծ. թ.։

այն մասին, վոր պատմությունը պետք
ե լուսաբանվի բարոյական պրոգրեսի
տեսակետից, զոմանք ել ասում ելին,
թե պատմությանը պետք ե մոտենալ
կաթոլիկ յեկեղեցու նվաճումների տե-
սակետից. խոսում ելին ոբյեկտիվ ար-
դարության մասին. ասում ելին, թե
ճշմարիտ պացիֆիզմը հիմնվում ե ակ-
տիվության և խոկական կրոնասիրու-
թյան վրա. խոսում ելին դասակարգա-
լին պայքարի վնասակար լինելու մա-
սին և այլն:

1926 թվին կայացած Հռոմի հա-
մաժողովի որակարգում յերկու հարց
եր դրված. 1. դաստիարակության հիմք
ծառայող բարոյականության համաշ-
խարհային կողեքսի մշակման հնարա-
վորությունը, 2. անհատը ու նրա զար-
գացման միջոցները ընտանիքում, դրա-
բոցում ու հասարակության մեջ:

Ինքնըստինքյան հասկանալի յե,

վոր խոսքն այստեղ վերաբերում ե
րուրժուական բարոյականութիւն կո-
ղեքսի մշակման հարցին, անհատի զար-
դացմանը բուրժուազիալի համար ցան-
կալի վոգով.

«Կոմունիստական մանիֆեստում»
Մարքսն ու Ենգելսը գեղեցիկ կերպով
պարզել են հավիտենական բարոյակա-
նութիւն կամ անհատի մասին տեղի
ունեցող այդ զրուցների աստառը:
Նրանք ցուց են տալիս, թե ինչպես
բարոյականութիւն կամ անձնավորու-
թիւն անկման մասին վողբալով՝ բուր-
ժուազիան աշխատում եր բանվոր դա-
սակարդի ուշադրությունը հեռացնել
դասակարդալին հակասությունները գի-
տակցելուց, դասակարգալին պալքա-
րից: — Ենգելսը հենց իր առաջին գըր-
վածքներում պարզ ցուց ե տալիս, թե
ինչպես կապիտալիստական հասարա-
կութիւն խորքերում ծնունդ ե առնում

մի նոր դասակարգ, վարձու բանվոր-ների դասակարգը, վորի համար, աշխատանքի պայմանների ազդեցության տակ, առաջանում ե մի նոր, ավելի բարձր բարուականություն, կոլեկտիվիստական, կոմունիստական բարուականություն։

Կապիտալիստական լերկրներում պըոլետարիատը շատ թուզ կերպով միայն կարող ե ազդել, վոր իր աճող սերունդը իր — պըոլետարական — վոգով դաստիարակվի դպրոցներում։ Այդ լերկրներում դպրոցը տիրող դասակարգի, բուրժուազիայի ձեռքում ե գտնվում։

Մակայն պըոլետարիատն ունի իր դաստիարակության թեորիան։ Նրանիմքը դրել ե Մարքսը։ Ուսումնասիրելով լերեխանների գործարանալին աշխատանքը Անգլիայում, ծանոթանալով այն բոլորի հետ, ինչ վոր մտածել ու կլանքի մեջ իրագործել են Բելլերսն ու

Ռոբերտ Ռուենը՝ Մարքսն սկսեց հիմ-
նավորել ու պաշտպանել ուսուցման և
արտադրական աշխատանքի միացման
անհրաժեշտությունը։ «Գործարանական
սիստեմից, ինչպես այդ կարելի է ման-
րաման ծանոթանալ Ռոբերտ Ռուենից,
ծագում և սաղմը ապագայի դաստիա-
րակության, վորը վորոշ հասակից բարձը
բոլոր լեռեխաների համար արտադրա-
կան աշխատանքը կմիացնի ուսուցման
և մարմարամարզության հետ, և դա կլի-
նի վոչ միայն հասարակական արտա-
դրությունը բարձրացնելու մեթոդ,
այլև բազմակողմանի զարգացած մար-
դիկ արտադրելու միակ մեթոդ», գրում
է Կ. Մարքսը «Կապիտալի» I հատո-
րում։

Թե վորքան մեծ նշանակություն եր-
տալիս Մարքսն այդ տիպի ուսուցմա-
նը, դա լեռեկում և նրա «Գոթայի ծրա-
գրի բննադատությունից», վորտեղ նա

գրում ե . — «Արտադրական աշխատանքի
վաղ միացումը դասավանդության հետ
հզոր միջոց ե հանդիսանում ժամանա-
կակից հասարակությունը բարեփոխե-
լու համար» :

Մարքսը ցույց ե տվել նաև ալգ-
պիսի դասավանդման բնույթը : Յելնե-
լով խոշոր արդյունաբերության զար-
գացման տենդենցների վերլուծումից,
նա ընդգծում ե բազմակողմանի պոլի-
տեխնիկ դաստիարակության անհրա-
ժեշտությունը :

Խոշոր արդյունաբերության զարգա-
ցումը բուրժուական դպրոցը մղում ե
դեպի պոլիտեխնիկ դաստիարակության
ճանապարհը . սակայն բուրժուազիան
հասկանում ե , վոր ալգպիսի դաստիա-
րակությունը վերջ կդնի նրա տիրա-
պետությանը :

Այդ պատճառով բուրժուազիան
ստիպված ե առաջիւ պես պահպանելու
գրավարժական դպրոցը :

Միայն իշխանութիւնն նվաճումը
բանվորութիւնն . կողմից հնարավորու-
թիուն կտա իրագործելու պոլիտեխնիկ
դաստիարակութիունը:

Մեր ռուսական մանկավարժութիւնն
մեջ արտահայտվող հայացքները դաս-
տիարակութիւնն մասին միայն վերոհիշ-
յալ հայացքների փոփոխակներն են:
Հետաքրքրական կլիներ նշել, թե մեր
կամ յեվրոպական հեղափոխական շար-
ժումներն ինչ ազդեցութիւնն են արել
ալդ հայացքների վրա, ալդ շարժման
ազդեցութիւնը մեր դպրոցական դաս-
տիարակութիւնն գործնականի և մեր
ուսուցչութիւնն վրա. սակայն ալդ խրն-
դիրը պահանջում է շատ մեծ հետա-
խուզական աշխատանք, վոր տվյալ
բրոցուրի նեղ շրջանակից դուրս եւ:

ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՀԵՐԹԱԿԱՆ ԽՆԴԻԲՆԵՐԸ

Հոկտեմբերյան հեղաշրջումը նաև
դաստիարակչական գործի արմատական
հեղաշրջումն եր:

Խորհրդավին իրավակարգն սկսեց ու-
րիշ տեսակ դաստիարակել մասսաները:

Նա միլիոնավոր մասսաները կազմա-
կերպում ե խորհուրդների շուրջը, նպա-
տակ ունենալով ամբողջ կյանքը վերա-
կազմելու նոր հիմունքներով:

Խորհրդի լուրաքանչյուր անդամը
դառնում ե հասարակական գործիչ:
Խորհուրդների աշխատանքը տարեցտա-
րի խորանում ե, ընդգրկելով ավելի ու
ավելի լայն մասսաներ: Խորհրդավին
աշխատանքի շնորհիվ մասսաներն ա-
ճում են, սովորում, կազմակերպվում:

Այդ բոլորը կատարվում ե մանուկ-
ների աչքի առաջ:

Դաստիարակի նպատակը պետք ե
լինի—ոգնել յերեխաներին, վորքան կա-
րելի յե, շուտ մասնակցելու խորհուրդ-
ների աշխատանքին, իր մանկական
ուժերի ներածին չափ ոգնելու այդ
աշխատանքին:

Այդ աշխատանքի ժամանակ մանուկներն ավելի լավ կարող են հասկանալ, թե շրջապատող կյանքում վորքան հին մնացորդներ կան դեռևս, կսովորեն տարբերելու, թե ինչի՞ դեմ պետք ե պայքարել և ինչը պետք ե հոգատար կերպով պահպանել ու զարդացնել:

Այդ աշխատանքի ընթացքում յերեխաներն անենից լավ կհասկանան մեր խորհրդալին իրավակարգի հիմունքները, կսովորեն առողյա կյանքում պայքարելու կանանց իրավահավասարության և բոլոր ազգերի իրավահավասարության համար, կսովորեն իսկական ընկերական վերաբերմունք ունենալու դեպի կինը, կհարեն իսկական միջազգայնությանը: Այդ աշխատանքի ընթացքում յերեխաները կսովորեն ընկերական դոդման ու փոխադարձ ոդմության — աշխատանքի ժամանակ:

Այդպիսի աշխատանքի դաստիարակ-

չական նշանակությունը շատ մեծ է:

Սակայն անհրաժեշտ է, վոր խորհուրդները ոգնության գան լերեխաներին, սովորեն ոգտագործելու նրանց ուժերը, խորհուրդներին ոգնելու նրանց ջերմ ցանկությանը:

Աճող սերնդի դաստիարակության գործը միայն ծնողների գործը չե, միայն ուսուցիչների գործը չե. դաբոլոր աշխատավորների, վողջ հեղափոխական ժողովրդի գործն է:

Յեվ խորհուրդները չեն կարող հրաժարվել մանուկների դաստիարակության գործում մասնակցելուց:

Դաստիարակի պարտականությունն է խորհուրդների սեկցիաների խորհրդատուն լինելու, ոգնելու նրանց այն աշխատանքներում, վորոնցով ավելի լավ կարելի լե դաստիարակել, կազմակերպել լերեխաներին, հսկողություն կազմակերպել լերեխաների աշխա-

տանքների և նըանց դաստիարակության վրա:

Պետք է, վոր խորհուրդները մանուկների համար դառնան հաղաղատ, մոտ, նըանց կյանքի հետ որդանապես կապված մարմիններ։ Այդ ժամանակ խորհուրդների դաստիարակչական ազգեցությունը աճող սերնդի վրա իսկապես վոր հսկայական կլինի։

Խորհրդավին իրավակարգն ամենից առաջ ոգնում ե կազմակերպվելու ազգաբնակության ավելի՝ զիտակից մասին, այն մասին, վոր ավելի լով ե հասկանում, թե դեպի ուր ե գնում հասարակական դարգացումը, ի՞նչ պիտի անել տվյալ մոմենտին, վոր կարելի լինել ապահովել աշխատավոր մասսակի հաղթանակը, ոգնում ե կազմակերպելու ազգաբնակության այն մասին, վոր իր ամբողջ կյանքը անքակտելիորեն կապել ե աշխատավորու-

թլան գործի հետ, վորը ներքուստ ա-
վելի յե ենթարկված դիսցիպլինալի:
Ազգաբնակութլան այդ մասի հիմնական
կորիզը, վորը կազմակերպված ե Համ-
կ. կ. (բ.) կուսակցության մեջ, հան-
դիսանում ե բանվոր դասակարգի ա-
ռաջավոր մասը — նրա ավանդարդը:

Կուսակցության դաստիարակչական
դերը խիստ մեծ ե:

Դաստիարակի գործը կայանում է
նրանում, վոր կոմունիստների աշխա-
տանքի կոնկրետ որինակներով, առան-
ձին կոմունիստների (Լենին, Ֆրունզե
և այլն) կյանքի կոնկրետ նկարագրու-
թյուններով ցուց տա, թե ինչի՞ հա-
մար և ինչպես են պայքարում կոմու-
նիստները, մանուկների մեջ ցանկու-
թյուն արթնացնի, վոր իրենք ել դառ-
նան կոմունիստներ:

Յեթե դաստիարակը կարողանա այդ
բանը անել, նա կուժեղացնի կուսակ-

ցության դաստիարակչական ազդեցությունը աճող սերնդի վրա:

Յերեխաներին ծանոթացնելով կուսակցության աշխատանքի հետ, դաստիարակը պետք է ցուց տա, թե ինչով են առաջնորդվում կոմունիստները իրենց գործունելության ժամանակ: Նա պետք է լերեխաներին ծանոթացնի կոմունիստական բարոյականության հետ: Այդ բարոյականությունը (մորավ) նման չե բուրժուական բարոյականությանը, և նրա դաստիարակչական ազդեցությունը խիստ մեծ եւ բուրժուական բարոյականությունը հանգում ե այն բանին, վոր Շյուրաբանչյուրը պետք է լինի իր համար, իսկ աստված—ամենքի համար», իսկ կոմունիստական բարոյականության լոգուն ե—բոլոր աշխատավորների զոդումը, միացումը՝ պայքարելու համար — առանց տեր աստծու ողնության

— ամենքի համար պայծառ կյանք ձեռք
բերելու նպատակով։

Դաստիարակը պետք ե որինակնե-
րով բացատրի այն, ինչ վոր 20 թվա-
կանին կայացած յերիտասարդության
համագումարին ասել ե Լենինը կոմու-
նիստական բարոյականության մասին։
«Պետք ե, — ասում եր Լենինը, — վոր ժա-
մանակակից յերիտասարդության դաս-
տիարակության, կը թության և ուսման
վողջ գործը նրա համար հանդիսանա,
վորպես կոմունիստական բարոյակա-
նության դաստիարակություն։

«Սակայն գոյություն ունի, արդիոք,
կոմունիստական մորայլ։ Գոյություն
ունի կոմունիստական բարոյականու-
թյուն։ Ի հարկե, այու Հաճախ այնպես
են կարծում, թե մենք չունինք մեր
առանձին բարոյականությունը. շատ
հաճախ բուրժուազիան մեզ մեղադրում
ե այն բանում, վոր մենք, կոմունիստ-

ներս, բացասում ենք ամեն տեսակի
մորավ: Դա հասկացողությունները
կեղծելու, բանվորների ու գյուղացի-
ների աչքերը ավագ լցնելու մի միջոց ե:

«Ի՞նչ մտքով ենք մենք բացասում
մորավը, բացասում բարոյականու-
թյունը:

«Այն իմաստով, վորպիսով քարո-
զում ե նրան բուրժուազիան, վորը
այդ բարոյականությունը դուրս եր
բերում աստծու պատվիրաններից, հրա-
մաններից: Մենք այդ առթիվ, ի հար-
կե, ասում ենք, վոր աստծուն չենք
հավատում, և շատ լավ գիտենք, վոր
աստծու անունից խոսում եր հոգեորա-
կանությունը, խոսում եցին կալվածա-
տերերը, խոսում եր բուրժուազիան,
վորը նրան դուրս եր բերում իդեա-
լիստական ու կիսաիդեալիստական
ֆրազներից, վորոնք միշտ նույնպես

հանգում ելին մի բանի, վոր շատ
նման ե աստծու հրամանին:

«Յուրաքանչյուր այդպիսի բարոյա-
կանություն —վերցրած արտամարդ-
կային, արտադասակարգային հասկա-
ցողությունից, մենք բացասում ենք:
Մենք ասում ենք, վոր դա սուտ ե,
վոր դա խաբեցություն ե, վորով ու-
զում են լցնել բանվորների ու գլու-
ղացիների ուղեղը —հոգուտ կալվածա-
տերերի ու կապիտալիստների:

«Մենք ասում ենք, վոր մեր բարոյա-
կանությունը լիովին ծառայում ե
պրոլետարիատի դասակարգային կովի
շահերին: Մեր բարոյականությունը
լեզրակացվում ե պրոլետարիատի դա-
սակարգային պայքարի շահերից:

«Մենք ասում ենք. բարոյականու-
թյունը —դա այն ե, ինչ վոր ծառա-
յում ե հին շահագործող հասարակու-
թյան բալքայման գործին և վողջ աշ-

խատավորության համախմբմանը պրո-
լետարիատի շուրջը, վոր ստեղծում ե
նոր կոմունիստական հասարակու-
թյուն։

Յեթե դաստիարակը կարողանա ոգ-
նել յերեխաներին հասկանալու Լենինի
այս խոսքերը, նա կոգնի կոմունիս-
տական բարոյականության դաստիա-
րակչական աղղեցության իրազործ-
մանը աճող սերնդի վրա։

Պատգամավորական ժողովների աշ-
խատանքների որինակներից, կոմիերիտ-
միության որինակից աշակերտը կտես-
նի, թե ի՞նչպես կազմակերպություն-
ների մեջ սովորում են կոմունիստա-
կան բարոյականություն, թե ի՞նչպես
նրանք սովորում են միատեղ գործելու
ձևերը – իրենց ընդհանուր կոմունիստա-
կան նպատակներին համնելու համար։

Դաստիարակը պետք է ոգնի յերե-
խաներին, իրենց ուժերը ներածին

չափ, կցվել պատղամավորական ժողովների և կոմիերիտմիության այդ աշխատանքին։ Յեվ ինչպես խորհուրդներում, այնպես ել կին կազմակերպություններում, կոմիերիտմիությունում նա պեսաք ե հանդիսանա այդ կազմակերպությունների խորհրդատուն — մանուկներին ողնելու գործը կազմակերպելու մեջ։

Մեզանում 11 միլիոնից ավելի աշխատավորություն ե կազմակերպված պրոֆմիությունների մեջ։ Լենինն սուսմ եր, վոր պրոֆմիությունները հանդիսանում են վորպես դաստիարակչական կազմակերպություններ, ներգրավելու, ուսուցանելու կազմակերպություններ։ դա դպրոց ե, կառավարելու դպրոց, տնտեսության դպրոց, կոմունիզմի դպրոց։

Դաստիարակը պետք ե պարզաբանի պրոֆմիությունների այդ դաստիարակ-

չական դերը և սովորեցնի լերեխաներին, թե ինչպես պիտի կազմակերպեն իրենց աշխատանքը, վոր ավելի նպատակահարմար լինի, վորպեսզի կարելի լինի իրենց մեջ դաստիարակել կողեկտիվ աշխատանքի ունակությունները, խնայել ժամանակը, ուզմը, փոխադարձ ոգնել միմյանց, իրենց կազմակերպության մեջ գրավել ավելի ու ավելի մեծ թվով լերեխաներ։ Այդ դեպքում աշխատանքի դաստիարակչական դերը անհամեմատ ավելի շատ կմեծանաւ։

Ցանկալի լե, վոր պըռֆմիություններն իրենցից ներկայացուցիչներ նշանակեն — յերեխաների աշխատանքային կազմակերպություններին ոգնելու համար։

Մեզանում սկսել ե արագությամբ աճել կոլեկտիվ տնտեսությունների և կոմունաների շինարարությունը։

Հենց հիմա լել նկատելի լե, թե վոր-

քան մեծ դաստիարակչական ազդեցություն ունեն կոմունաներն իրենց անդամների վրա, թե ինչպես կոմունաներում նոր կենցաղ ե առաջանում: Բայց առանձնապես կոմունական ռեժիմն ազդում ե մանուկների վրա: Երջապատի կազմակերպված, կոլեկտիվ աշխատանքի ազդեցությունը մանուկների վրա շատ մեծ է: Այդ ե պահճառը, վոր կոմունաների անդամները շարունակ պնդում են, վոր կոմունաներում դպրոցներ բացվեն, վորտեղ կարողանալին հաճախել նաև շրջակա գյուղերի լերեխաները, իսկ մեծ կոմունաներում նույնիսկ հանրակացարաններ բացվեն ավելի հեռու գտնվող գյուղերի լերեխաների համար: Հիմա յել կոմունարներն առանձին հոգ են տանում «կոմունալի լերեխաների» համար, հետաքրքրվում են այն հարցով, թե դպրոցում ինչպես ե կազմա-

կերպված լերեխաների ուսուցման և
դաստիարակության գործը, ինչպես և
կաղմակերպված մանուկների աշխա-
տանքն ու հանգիստը:

Դաստիարակները պետք ե կոմու-
նաներին նայեն, վորպես կոլեկտիվ
դաստիարակության բազալի վրա և ոգ-
նեն կոմունարներին նրանց դաստիա-
րակչական մեծ աշխատանքի ընթաց-
քում:

Դաստիարակը պետք ե ոգնի կոլեկ-
տիվ տնտեսություններին, ամեն տե-
սակի կոռպերատիվներին նրանց դաս-
տիարակչական աշխատանքի ժամանակ:

Պետք ե մանկական բաժիններ կազ-
մակերպել այնպիսի կամավոր ընկերու-
թյուններին կից, վորպիսիք են «Մա-
նուկների բարեկամներ», «Տեխմաս» և
այլն:

Հերթական խնդիր ե հանդիսանում —
կուսակցական, խոհրդային և հասարա-

կական կազմակերպություններին ոգ-
նելու, վոր սրանք սիստեմատիկորեն
ավելի ու ավելի զարդացնեն իրենց
դաստիարակչական աղդեցությունն ա-
ճող սերնդի վրա.

Անհրաժեշտ ե նրանց զոդումը դրա-
բոցի հետ:

Անհրաժեշտ ե ավելի լավ կազմա-
կերպել դպրոցական խորհուրդները,
ապահովելով նրանցում կուսակցական,
խորհրդային, հասարակական կազմա-
կերպությունների աղդեցությունը բա-
վարար չափով. անհրաժեշտ ե միասին
քննել մանուկների և պատանիների
հասարակական դաստիարակության
խնդիրները:

Այդ դեպքում միայն կարելի կլինի
իրագործել համ կե(բ)կ-ի ծրագրի §12-ը,
վորը ասում ե.

«Պըոլետարիատի դիկտատուրայի
շրջանում, այսինքն այն պայմանների

նախապատրաստման շրջանում, վորոնք
հնարավոր կդարձնեն կոմունիզմի լիա-
կատար իրագործումը, դպրոցը պետք
է լինի վոչ միայն ընդհանրապես կո-
մունիզմի սկզբունքները տարածող,
այլև պրոլետարիատի գաղափարական,
կաղմակերպչական ու դաստիարակչա-
կան ազգեցության տարածողը աշխա-
տավոր մասսաների կիսապրոլետարա-
կան և վոչ-պրոլետարական խավերի
վրա, վորպեսզի դաստիարակվի այն-
պիսի մի սերունդ, վոր ընդունակ լինի
վերջնականապես հաստատելու կոմու-
նիզմը»:

Ի՞արկե, կուսակցական, խորհրդային
և հասարակական կաղմակերպություն-
ների դաստիարակչական ազգեցու-
թյունների հետ միասին, — նույն ուղ-
ղությունը պետք է ունենանաև դպրո-
ցական ծրագրերի բովանդակությունը,
վորը պետք է յերեխաներին բացատրի,

պարզաբանի նրանց շուրջը կատարվող
շինարարության իմաստը և այլն:

Այդ նույն ուղղությամբ պետք է
ընթանանակ դպրոցական կյանքի կազ-
մակերպումը: Դաստիարակության ստըր-
կատիրական, ճորտատիրական, բուր-
ժուական ձևերը («պատիժների աստի-
ճանացույց», աշակերտների բաժանումն
«վոչխարների ու այծերի», լերեխանե-
րից վոմանց մյուսներին պատժելու
իրավունք տալը, մանկական ինքնասի-
րության և կարյերիզմի գրգռումն, ան-
հատականության պատվաստումն) պետք
է խիստ, միահամուռ դիմադրության
հանդիպեն, թե աշակերտների և թե
ուսուցիչների կողմից, պետք է դատա-
պարտվեն տեսչության, լուսաշխի ու
պիոներական կազմակերպությունների
կողմից:

Մեր լերկրի կուսակցական, խորհր-
դային և հասարակական կազմակեր-

պութիունները դաստիարակչական աղ-
դեցութիուն են անում նաև դաստիա-
րակների վրա:

Դաստիարակը չի կարող մնալ վողջ
հասարակայնութիունից դուքս։ Նա չի
կարող այդ՝ ավելի ու ավելի զարգա-
ցող հասարակայնությանը նայել մի կող-
մից, վորպես հանդիսատես։ Նա պետք
է լինի նրա մասնակիցը, նա պետք ե
մասնակցի հեղափոխական (կյանքը փո-
խող) պրակտիկային։ Միայն այդ դեպ-
քում նա իր վրա կզգա նրա դաստիա-
րակչական ազդեցությունը։

Ահա թե ինչի պետք ե ամեն կերպ
մաքառել այն ձգտումների դեմ, վորոնք
նպատակ ունին ուսուցչին կտրելու
հասարակական աշխատանքից և փա-
կելու դպրոցի պատերի մեջ։ Հասարա-
կական գործունելության դաստիարակ-
չական ազդեցությունը ավելի կարևոր
է, քան կյանքից կտրված հարյուրավոր

մեթոդական մշակումների ուսումնասիրությունը:

Կազմակերպված հասարակախնության դաստիարակչական ազգեցությունն զգում են իրենց վրա նաև ծնողները: Յեվ յերբ այդ հասարակախնությունն ավելի մոտենա դաստիարակչական աշխատանքի խնդիրներին, նա կազդի նաև ծնողների վրա և նրանց կհարկադրի իրենց դաստիարակչական շատ մեթոդների վրա նայելու նոր աչքերով:

Այդ ժամանակ հասարակական վողջ կենցաղը, վողջ վերակազմակերպվող կյանքը, դպրոցն ու դաստիարակը, ընտանիքը — ամենքը կդաստիարակեն մանուկներին ու յերիտասարդությանը լենինիզմի վոգով, մարքսիզմի վոգով:

Այդպես կազմակերպված դաստիարակությունը, թերեւս, ավելի կհամապատասխանի այն վորոշմանը, վոր իր ժամանակին տվել ե Սեն-Սիմոնը.

«Դաստիարակություն ասելով, այդ բառի ամենալայն իմաստով, պետք է հասկանալ այն բոլոր ջանքերի գումարը, վոր դործադրվում են այն հասարակակարգին հարմարվելու համար, դեպի վորը կոչ ե անում մարդկության հառաջընթաց շարժումը»:

ԽՆԴԻՐՆԵՐ, ՎՈՐՈՆՔ ԿԱՐՈՏ ԵՆ ՄՇԱԿՄԱՆ

Կոմունիստական դաստիարակությունը կարելի է կանոնավոր տանել միայն այն դեպքում, յեթե նա զիտականորեն լինի հիմնավորված:

Ուղիղ դաստիարակելու համար պետք է իմանալ — ի՞նչ ե ներկայացնում իրենից մանուկը, ի՞նչպես ե նա զարգանում:

Կենսաբանության (այսինքն այն գիտության, վոր նվիրված է կենդանի, զարգացող որդանիզմների ուսումնա-

սիրությանը) ժամանակակից զբությունը — մանավանդ զլխուղեղի, նյարդային հանակարգության, ներքին թորման գեղձերի աշխատանքի ուսումնասիրությունը — մեզ հնարավորություն ե տալիս ուսումնասիրելու զարգացող մանկան անձնավորության ձևակերպման որենքները։ Այդ որենքներն ուսումնասիրում ե մանկաբանությունը։

Մանկաբանությունը՝ յերիտասարդ գիտություն ե։ Նա արմատապիս տարբերվում է հին հոգեբանությունից։ Հին հոգեբանությունը խիստ համերաշխ եր իդեալիզմին։ Մեր մանկաբանությունն իր ելությամբ մատերիալիստական է։ Վաղուց արդեն վոչնչացված է հոգու և մարմնի առանձին գոլության մտսին յեղած լեզենդը, վաղուց արդեն հաստատված է, վոր մարդու հոգեկան կյանքն անբաժան ե նրա նյարդային համակարգության աշխատանքից։ Նրա

գլխուղեղի աշխատանքից։ XVIII դարի
մատերիալիստները շատ սահմա-
սարակ ձեռվ ելին պատկերացնում
մարդու հոգեկան գործունելությունը,
վորը, ինարկե, հանդիսանում ե վոր-
պես մարդկային որդանիզմի ֆունկ-
ցիա, սակայն շատ բարդ ֆունկցիա։
Ահա այդ բարդությունը նրանք չե-
ցին ըմբռնում։ Այդ պատճառով նրանց
անվանում ելին «վուլ'գար»—գուեհիկ
մատերիալիստներ։ Այդ ժամանակից,
հետո բնական դիտությունները հսկա-
յական առաջադիմություն են արել։
Ժառանգականության և ոեֆլեքսների
մասին գոյություն ունեցող ուսմունքը
հայտնաբերել ե այն բոլոր ուսակցիա-
ների գոյացման մեխանիկան, վորոնք
հայտնի լեն հոգեկան գործունելու-
թյուն անունով։ Առանձնապես վերջին
ժամանակներս մեծ նվաճումներ ե ա-
րել այդ տեսակետից նեվրոպատոլո-

գիւան (Նյարդահիվանդաբանությունը), վորն ուսումնասիրում եւ Նյարդալին համակարգության հիվանդությունները և նրանց պատճառները:

Մեֆլեքսների ուսումնասիրությունը լուսաբանել եւ ելի մի հարց — նա բացատրել եւ մարդուն շըջապատող հաւսարակական միջավայրի ունեցած ազդեցությունը նրա հոգեկան գործունելության վրա։ Այդպիսով կամուրջ եւ ձգված մատերիալիստական գիտության յերկու բնագավառների մեջ։ Դա ահագին նշանակություն ունի։

Ճիշտ եւ, մանկաբանությունն ամեն տեղ մատերիալիստական բնույթ չունի։ Բուրժուական յերկրներում նու շարունակ սահում, ընկնում եւ իր մատերիալիստական պատվանդանից։

Այդ պատճառով պեսաք եւ նկատի ունենալ վո՞չ թե մանկաբանությունն ընդհանրապես, այլ նրա խորհրդակին ձևերը։

Խորհրդավին մանկաբանությունն արդեն լուրջ նվաճումներ ե արել. այդ նվաճումները, վորքան կարելի լի, ողետք ե շուտ դարձնել խորհրդավին մանկավարժների լայն մասսաների ուսուականություն։

Սակայն մանկաբանությունը դեռ ևս ամեն բան չի մանկավարժության նկատմամբ, այսինքն այն դիտության նկատմամբ, վոր նվիրված ե աճող սերնդի դաստիարակությանը։ Մանկաբանությունը լերեան ե հանում այս կամ այն ներգործության եֆեկտը, նրա կենսաբանական նպատակահարմարությունը, այդ ներգործությունների կենսական սահմանադծումները (լիմիտները) մանկան զարգացման զանազան աստիճանների վրա։

Մանկավարժությունն իր մեջ բովանդակում ե մանկաբանությունը, բայց չի սպառվում նրանով։ Պետք ե

նաև զոդում, համագրություն մանկացանության ու մարքսիստական սոցիալոգիայի միջև, — մի համագրություն, վոր պետք ե հարմարեցրած լինի աճող սերնդի վրա ազդելու գործին։

Մենք պետք ե մարքսիստորեն հասկանանք միջավայրը։

Մենք չենք ուզում մանկանն առանձնացնել կյանքից։ Այդ բանը մեզ պետք չե։ Դա պետք եր կալվածատերերին, վորոնք իրենց լերեխաներին տալիս ելին փակ դպրոցական հիմնարկները — ինիստիտուտներ, կադետների կորպուսներ, լիցեյներ։

Այդպես եր պետք բուրժուազիային, վոր առաջ իր լերեխաներին տալիս եր ֆիլանտրոպինները, իսկ հիմա տալիս ե «գլուղական դաստիարակչական հիմնարկները»։ Վորքան նրանց լերեխաները հեռու լեն մնում կյանքից ու նրա պալքարից, այնքան ավելի քիչ ու վատ

Են հասկանում նրանք այդ կյանքը,
այդ պայքարը, այնքան ավելի թեթև ե
թվում նրանց այդ պայքարը։ Դեպի
շրջապատող կյանքի երեսութները կու-
րորեն վերաբերվելու ոգնում և նրանց
ավելի վճռական կերպով պաշտպանելու
իրենց կալվածատիրական ու բուրժու-
ական տեսակետը։

Մենք մեր լերեխաների դաստիարա-
կության դործը կազմակերպում ենք
կյանքի խորշերուս, հենց այդ լեռուն
կյանքի ոգնությամբ, վոր ընթանում ե
սոցիալիզմի համար տարվող անխօնչ
ու որեցոր ավելի ու ավելի խորա-
ցող պայքարի ճանապարհով։

Սակայն կյանքի խորշերում տարվող
դաստիարակությունը պահանջում ե
շատ լուրջ նախադրյալներ։

Նա պահանջում ե շրջապատող մի-
ջավայրի ուսումնասիրություն։ Վոչթե-
մակերեսորեն, հին գավառագիտական

մտքով կամ այդ միջավայրի տեղացիական վայրիվերո ծանոթություն։

Նա պահանջում է այդ միջավայրի մարքսիստական վերլուծում, նրանում կատարվող հասարակական յերեսությունների անալիզ, նրանց փոխադարձ կախումն, նրանց պատճառներն ու դրական կամ բացասական նշանակությունն ըմբռնելու կարողություն։ Անհրաժեշտ է շրջապատող միջավայրում նկատվող հասարակական յերեսությունները կապել վողջ յերկրում կատարվող պրոցեսների և ընթացիկ մոմենտի գործնական խնդիրների հետ։

Առաջման սեպանում միայն առանձին փորձեր են յեղել այդպիսի վերլուծումներ կատարելու այս կամ այն շրջանի, քաղաքի, այս կամ այն բոնվորական կամ գյուղական միջավայրի։ Ուսուցչությունը մասսայորեն դեռ ևս չի տիրապետում միջավայրի այդպիսի

մարքսիստական վերլուծման մեթոդին։
Պետք է նրան զինել այդ մեթոդով։
Բայց դա քիչ եւ Բավական չե միայն
արձանագրել յերևուլիթները։ Պետք է
նաև կարողանալ տարբերել այդ յերեւ-
վուլիթների շարքում հին կենցաղի մնա-
ցորդները, վոր դատապարտված են
վոչնչացման, և նորի ընձյուղները։
Մարդ պետք է իրեն հաշիվ տա, թե
ինչ ճանապարհով պիտի ընթանա հնի
ճահացումը և նոր ընձյուղների զար-
գացումը։ Առանց դրան չի կարելի վո-
րոշել, թե ինչը պիտի պաշտպանել և
ինչի դեմ պիտի պայքար մղել, ինչ
մեթոդներով պաշտպանել և ինչ մեթոդ-
ներով պայքարել։ Յեթե դաստիարակն
այդ մասին չունի պարզ մտապատկեր,
լինի նա ուսուցիչ կամ կոլվար, նա չի
կարող նպաստել կյանքի խորքերում
կատարվող դաստիարակությանը, այն
դաստիարակությանը, վոր հիմնված

և կյանքի վրա։ Դաստիարակչական
պրոցեսի և կյանքի գողումը կմնա
գուտ ձեւական մի բան և չի տա դաս-
տիարակչական անհրաժեշտ եֆեկտը։
Վորպեսզի ստացվի այդ դաստիարակ-
չական եֆեկտը, պիտի կարողանալ
մանուկներին հուզականորեն պատրաս-
տել—այս կամ այն յերեսութիւններն ըմ-
բռնելու, պիտի կազմակերպել նրանց
հուզական կյանքը։

Գիտականորեն մշակված (մանկա-
բանության ու դաստիարակության կո-
մունիստական նպատակների տեսա-
կետից) թեորիա դեռ ևս չկա, բայց
կյանքը համառորեն պահանջում է այդ-
պիսին։

Այդ նույն հարցի հետ սերտ առըն-
չություն ունեն նաև խաղի դաստիա-
րակչական նշանակության և գեղար-
վեստական դաստիարակության հար-
ցերը։

Խաղն ամենից հաճախ գնահատվում
է ֆիզկուլտուրայի տեսակետից։ Յեր-
բեմն միայն նրան արժեք և տրվում
նաև նրան խորհրդային կերպարանք
տալու տեսակետից։ Բայց չկա այս
կամ այն խաղերի հասարակական-դաս-
տիարակչական նշանակության մասին
վորեե անալիզ։ Վայր չափով այս կամ
այն խաղերը ունակություններ են
դաստիարակում—կոլեկտիվ կերպով
արձագանք տալու վորեե յերեսութիւ-
առթիվ, կոլեկտիվ կերպով գործելու,
կամ վարքան նրանք զոդում, դիսցիպ-
լինայի յեն յենթարկում, կազմակեր-
պում,—գործադրվող խաղերի այդպիսի
անալիզ դեռ ես չկա. սակայն այդ
բանը շատ անհրաժեշտ եւ։

Խաղերի հարցի հետ սերտ առնչու-
թյուն ունի նաև գեղարվեստական
դաստիարակության, գեղարվեստորեն
կազմակերպված գործողության և ըմ-

բռնման հարցը։ Յեվ դարձլալ պակասում
ե մանկական յերգերի, զրքերի, պատ
կերների, կինոյի, թատրոնի գիտական
անալիզը։ Վորքան հուղականորեն են
ներգործում այս կամ այն պատկեր-
ները տարբեր հասակներում, վորքան
են նրանք դաստիարակում, ինչ ուղ-
ղությամբ են դաստիարակում և այն։

Շատ թույլ ե մշակված նաև ազգա-
բնակության տարբեր խավերի պատ-
կանող ժամանակակից մանկության
այս կամ այն հասակի մանկական աշ-
խարհայացքը։ Դա չափաղանց կարեոր
հարց ե, վոր պիտի իր արտացոլումն
ունենա թե ծրագրներում և թե դա-
սավանդման մեթոդներում։

Վատ են մշակված մամնավոր մեթո-
դիկաները, վորոնք պիտի ցուց տան,
թե ինչպես պետք ե յերեխաներին
սովորեցնել ավելի տնտեսաբար, ավելի
եֆեկտիվ կերպով ձեռք բերելու հար-

կավոր դիտելիքներն ու ունակությունները և այդ դիտելիքներն ու ունակությունները կրանքի մեջ գործադրելու ձեերը:

Զկա մարքսիստորեն ու մանկավարժորեն հիմնավորված, լենինիզմի տեսակետից լավ զննված թեորիա մանկական ինքնավարությունների ու մանկական կազմակերպությունների վերաբերմանը: Ի՞նչպես կառուցել ինքնավարությունը և մանկական կազմակերպությունները, վորապեսզի նրանք մանկան վրա մաքսիմալ չափով դաստիարակչական ազդեցություն ունենան, վորապեսզի նրանք դաստիարակեն մանուկներին վոչ թե ստրկական, ճորտատիրական կամ բռնժուական վոգով, այլ սոցիալիզմի վոգով, կոլլեկտիվիզմի վոգով:

Պետք ե, որինակ, մշակել տարբեր հասակի մանկական կազմակերպու-

թյունների անդամների թվի լավագույն (ոպտիմալ) չափը, վորոշել այդ կազմակերպությունների աշխատանքի բնույթը – տարբեր աստիճաններում, մշակել աշխատանքը կանոնավոր կազմակերպելու հարցը, վորոշել այն պայմանները, վորոնք նպաստում են մանուկների ներքին գիտցիալիքնալի զարգացմանը. պետք ե բացատրել այդ կազմակերպություններին - իրենց անդամներին պատժի լենթարկելու՝ իրավունքներ տալու անթուղատրելիությունը, այդպիսի իրավունքների կազմակուծող ազդեցության հարցը, այն պայմանների մշակման հարցը, վորոնք մաքսիմալ չափով նպաստում են մանկական կաղմակերպությունների անդամների ինքնազործունելությանը, հասակավորների դերի մասին այդ կազմակերպությունների մեջ և այլն:

Պետք ե առանձին ուշադրությամբ

գիտականորեն մշակվի նաև մանկական
աշխատանքի հարցը:

Չի կարելի խոսել աշխատանքի դաս-
տիարակչական դերի մասին ընդհան-
րապես։ Տարբեր հասակներում աշ-
խատանքի տարբեր տեսակները տար-
բեր կերպով են ազդում։ Ահա թե ին-
չու աշխատանքի այս կամ այն տեսա-
կի դաստիարակչական դերի գնահա-
տությանը պետք է մոտենալ ամենից
առաջ մանկաբանական տեսակետից։
Բայց միայն մանկաբանական մոտեցու-
մը բավական չե։ աշխատանքի դանա-
գան տեսակները պետք ե վերլուծման
լենթարկվեն նաև նրանց հասարակա-
կան-դաստիարակչական տեսակետից։

Ինքնըստինքյան հասկանալի լե, վոր
աշխատանքի կատարումը լուրազան-
չութը հասակի մանուկների համար պետք
է լինի դյուրին։ Միևնույն չի մի
փոքրիկ փակտ բարձրացնել, թե մի ամ-

բողջ գերան, մինույն չե $\frac{1}{2}$ կիլո-
մետր ճանապարհ գնալ, թե 10 կիլո-
մետր, սունկ հավաքել, թե վորսե մե-
քենայի մողել շինել։ Մանկան ուժե-
րից վեր աշխատանքը հոգնեցնում է
նրան, վոչ թե ուժերը զարգացնում ե,
այլ քայլալում է նրանց, անվստահու-
թյուն և ներշնչում նրանց իրենց ու-
ժերի նկատմամբ, թուլացնում է նրանց
նպատակաձղուումը աշխատանքի ժա-
մանակ («մինույն ե – վոչինչ չի դուրս
գա»), անփութություն և ծագեցնում
աշխատանքի ժամանակ, վոչ թե կաղ-
մակերպում ե, այլ կազմալուծում։

Պետք ե վերլուծել աշխատանքի զա-
նազան տեսակները – նրանց դաստիա-
րակչական դերի տեսակետից։

Պետք ե պարզել, թե տարբեր հա-
սակի մանուկների վրա ինչպես ե ազ-
դում միապաղաղ մեխանիկական աշ-
խատանքը – տարբեր տեսողությամբ։

յերը և ի՞նչպիսի պայմաններում ե նա
մեղմացնում, կազմակերպում, ներքին
դիսցիպլինա դաստիարակում, և յերբ
միայն գրգռում, հոգնեցնում ու կազ-
մալուծում:

Պետք ե վերլուծման յենթարկել մե-
խանիկական աշխատանքի դերը կոլեկ-
տիվ աշխատանքի դանաղան տեսակ-
ների մեջ:

Պետք ե ոլարգաբանել ստեղծագոր-
ծական աշխատանքի դաստիարակչա-
կան դերը, այդ ստեղծագործական աշ-
խատանքի կոլեկտիվ ձևերը, ցուց տալ,
թե ի՞նչպես ե ազդում ստեղծագործու-
թիան վրա պոլիտեխնիկական դաստիա-
րակությունը, ծանոթությունը աշխա-
տանքի բազմազան ճյուղերի հետ,
նրանց տեխնիկական հասարակական
ելության ուսումնասիրությունը:

Պետք ե մշակել մանկական աշխա-
տանքի կազմակերպչական ձևերը – նը-

ըանց դաստիարակչական դերի տեսակետից:

Լավ աշխատավորներ պատրաստելու գործում շահագրգոված ե յուրաքանչյուր հասարակություն — թե բուրժուական և թե սոցիալիստական:

Բուրժուական հասարակությունը հրմուտ կատարողներ պատրաստելու գործում մեծ փորձ ունի կուտակված։ Այդ փորձը պետք է նկատի առնվի ու ոգտագործվի խորհուրդների լերկը կողմից իր նպատակների համար։

Սակայն աշխատանքի դաստիարակչական դերի ծանրության կենտրոնը կալանում է նրա նպատակադրման մեջ։

Բուրժուական հասարակության մեջ նպատակադրումը վորոշում է գործի տերը, կալվածատերը կամ կապիտալիստը — իրեն սպասարկող զյուղատընտեսիքարտարապետի և նրանց ձեռքի տակ լեղողների միջոցով։ Վարձու բան-

վորը — գլուղատնաւեսական բատրակը
կամ գործարանական բանվորը — կապի-
տալիստի առաջադրությունների հա-
սարակ կատարողներ են:

Նրանք շահագրգոված չեն կալվա-
ծաաիրոջ կամ կապիտալիստի ծրագրած
նպատակադրման իրագործման մեջ:
Նրանք շահագրգոված են միայն իրենց
անձնական աշխատավարձի բարձրաց-
ման մեջ: Նրանց նպատակադրումը,
նրանց դրդապատճառը դուռ անհա-
տական եւ:

Կապիտալիստական աշխատանքային
դաստիարակությունը նպատակ ունի
մանուկների համար սովորություն դար-
ձնելու արդյունաբերական բնույթ ու-
նեցող այնպիսի նպատակադրումներ ա-
նելու, վորոնք կապված են անձնական
շահագրգուման հետ և դրդում են այդ
նպատակադրումները լավ կատարելու
— կապիտալիստական հասարակության
հատուկ սովորական ձևերով:

Նպատակադրումը այնպիսի մի հասարակության մեջ, վորտեղ հողը և արտադրության միջոցները համայնացված են, արդեն դադարում են լինել մասնավոր տիրոջ նպատակադրում։

Նու ավելի ու ավելի լե դառնում կոռպազերացված արտադրողների նպատակադրում, վորոնք աշխատում են ընդհանուր պլանով—հոգուտ բոլոր աշխատավորների վողջ հսկայական կոլեկտիվի։

Կապիտալիզմից դեպի սոցիալիզմ անցնելու շրջանում պետք է այնպես դաստիարակել աճող սերունդը, վոր նակարողանա ու սովորություն դարձնի իր աշխատանքի համար միասնաբար առաջադրելու հանրոգուտ արտադրական նպատակադրումներ։

Դպրոցի հանրոգուտ աշխատանքն այդ ուղիով է ընթանում։ Արդեն բավական մեծ փորձ ենք ձեռք բերել

այդ տեսակնետից։ Բայց տեսականորեն
հարցը մշակված չեւ։

Ամենակարևորը նա լեւ, վոր մանուկ-
ներն իրենք վորոշեն իրենց հանրո-
պուտ աշխատանքի նպատակը։ Այնինչ՝
այդ նպատակը հաճախ վորոշում ե ու-
սուցիչը կամ կոլվարը։ Հանրուգուտ աշ-
խատանքի նպատակները դեռ չեն լեն-
թարկված քննության, նրանք չեն գրա-
վում լերեխաներին, չեն դաստիարա-
կում նրանցից հասարակական գործիչ—
կոլեկտիվիստներ։

Թե պոլիտեխնիկական դաստիարա-
կությունը վորքան ե նպաստում ուղիղ
նպատակներ առաջադրելու, նրանց ի-
րադորձման համար ուղիղ ճանապարհ-
ներ նախազծելու, կատարված գործը
վերստուգելու— այդ հարցը բոլորովին
չի մշակված։


Յեվ, վերջապես պետք ե ասել, վոր
պոլիտեխնիկական դաստիարակության


հարցն իր ամբողջությամբ դեռևս բավականաչափ չի լուսաբանված ու կապված կլանքի հետ:

Ահա այն դիխավոր հարցերը, վորոնք պահանջում են իրենց գիտական մշակումը, վորի բացակայությունը ցավագին ե ազդում մեր գործնական աշխատանքների վրա:

Աշխատանքի ընթացքում ավելի և ավելի պարզորոշ կերպով պետք ե արտահայտվեն կոմունիստական դաստիարակության առանձնահատկությունները, վորը պետք ե այնպիսի մի սերունդ դաստիարակի, վոր կարողանա իրագործել կոմունիզմը:








ԳԱԱ Հիմնարար Գիտ. գրադ.



FL0045720

[254.]

A I
2731



91-96 15 h.